# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2018թ. N 1072 - Ա

ք. Ստեփանակերտ

### 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍ ԿՐԱԾ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ 2018 թվականին կարկտահարության հետևանքով վնաս կրած հողօգտագործողների՝ ոռոգման ջրի մատակարարման պայմանագրերի հիման վրա մատակարարված ոռոգման ջրի դիմաց «ԽԱՉԵՆՇԻՆ» փակ բաժնետիրական ընկերության հանդեպ գոյացած պարտավորություններն այդ հողօգտագործողների փոխարեն ենթակա են վճարման պետական բյուջեի միջոցների հաշվին՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ սույն որոշման 1-ին կետով նախատեսված պետական աջակցության գործընթացն ապահովելու նպատակով «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 06 բաժնի 3 խմբի 1 դասի «01 Խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում» ծախսային ծրագրի «Մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորում» ծրագրով նախատեսված

միջոցներից «ԽԱՉԵՆՇԻՆ» փակ բաժնետիրական ընկերությանը հատկացնել 7 532 400 (յոթ միլիոն հինգ հարյուր երեսուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

***«Հաստատում եմ»***

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ***
***ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ***

***Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ***

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի դեկտեմբերի 24-ի
N 1072-Ա որոշման

**ՑԱՆԿ**

***2018 թվականին կարկտահարության հետևանքով վնաս կրած պետական աջակցություն ստացող հողօգտագործողների***

| Հ/հ | Հողօգտագործողի ազգանունը, անունը, հայրանունը (անվանումը) | Պայմանագրի համարը | Մշակվող կուլտուրայի տեսակը | Կարկտահարված հողատարածքի մակերեսը (հա) | Փաստացի ոռոգված ողամասի մակերեսը (հա) | Մատակարարված ոռոգման ջրի դիմաց կազմող պարտավորության արժեքը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| **1** | Պետրոսյան Հովիկ Շուրայի | 135 | ցորեն | 35 | 15 | 210 000 |
| **2** | Աղաջանյան Սոս Արթուրի | 35 | ցորեն | 161 | 20 | 280 000 |
| **3** | Գալստյան Արսեն Արմավիրի | 115 | ցորեն | 50 | 28 | 392 000 |
| **4** | «ՀԱՑ» ՍՊԸ | 48 | ցորեն | 135,7 | 135,7 | 1 899 800 |
| **5** | Ավետիսյան Էրիկ Վալերիկի | 37 | ցորեն | 24 | 23 | 322 000 |
| **6** | Գաբրիելյան Արա Խորենի | 30 | ցորեն | 11,4 | 11,4 | 159 600 |
| **7** | Իսրայելյան Վոլոդյա Արտաշեսի | 109 | գարի | 10 | 8 | 112 000 |
| **8** | Իսրայելյան Համլետ Սլավայի | 60 | ցորեն | 27 | 15 | 210 000 |
| **9** | Գալստյան Սուրեն Արմավիրի | 111 | ցորեն | 35 | 35 | 490 000 |
| **10** | Սառաջյան Հովիկ Կառլենի | 23 | ցորեն | 30 | 20 | 280 000 |
| **11** | Աղաբաբյան Լևոն Աղաբաբի | 80 | ցորեն | 6,5 | 6,5 | 91 000 |
| **12** | Աղաջանյան Սոս Արթուրի | 35 | եգիպտացորեն | 68 | 68 | 816 000 |
| **13** | «ՀԱՑ» ՍՊԸ | 48 | եգիպտացորեն | 50 | 50 | 600 000 |
| **14** | Գալստյան Գևորգ Արմավիրի | 143 | եգիպտացորեն | 7 | 7 | 84 000 |
| **15** | «ՀԱՑ» ՍՊԸ | 48 | արևածաղիկ | 52 | 50 | 600 000 |
| **16** | Շահրամանյան Սամվել Վլադիմիրի | 179 | արևածաղիկ | 10 | 10 | 120 000 |
| **17** | Իսրայելյան Համլետ Սլավայի | 60 | բանջարաբոստան | 0,5 | 0,5 | 30 000 |
| **18** | Հայրապետյան Նորայր Գարեգինի | 120 | բանջարաբոստան | 1,5 | 1,5 | 90 000 |
| **19** | Ստեփանյան Աշոտ Ապետի | 180 | բանջարաբոստան | 2 | 2 | 120 000 |
| **20** | Շահբազյան Էրիկ Վաչիկի | 62 | բանջարաբոստան | 1,1 | 1 | 60 000 |
| **21** | Ավանեսյան Դավիթ Վլադիմիրի | 83 | ցորեն | 20 | 15 | 210 000 |
| **22** | Կարապետյան Կամո Էդիկի | 72 | ցորեն | 10 | 10 | 140 000 |
| **23** | Կարապետյան Կամո Էդիկի | 72 | եգիպտացորեն | 8 | 8 | 96 000 |
| **24** | Մելքումյան Ալեքսանդր Մանվելի | 75 | եգիպտացորեն | 10 | 10 | 120 000 |
| | ***Ընդամենը*** | | | 765,7 | 550,6 | ***7 532 400*** |

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ***
***ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ***

ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ